Դեղամիջոցների QT/TdP ռիսկը

Պացիենտները կարող են օգտվել QT ինտերվալը երկարացման ռիսկ ունեցող դեղամիջոցների ցանկից՝ բժշկի հետ ռիսկ/օգուտ հարաբերությունը քննարկելու և ցուցակում ընդգրկված դեղամիջոցներ ընդունման պարագայում նախազգուշական միջոցառումների և բուժման մոնիտորինգի խստիվ պահպանման նպատակով: Դեղամիջոցի QT/TdP ռիսկն ամեն ոք առանց գրանցման կամ վճարի կարող է ստուգել https://www.crediblemeds.org/index.php/drugsearch էջում կամ CredibleMeds Mobile բջջային հավելվածում՝

Available on the App Store | ANDROID APP ON Google Play | Download for Windows Phone

Known Risk of TdP (հայտնի ռիսկ) – այս դեղամիջոցներն երկարացնում են QT ինտերվալը **ԵՎ** հստակորեն փոխկապակցված են TdP հայտնի ռիսկի հետ՝ նույնիսկ ըստ ցուցումների կիրառելու պարագայում:

Possible Risk of TdP (հնարավոր ռիսկ) – այդ դեղամիջոցները կարող են QT ինտերվալն երկարեցնել **ԲԱՅՑ** ներկայումս ըստ ցուցումների կիրառման պարագայում TdP հարուցման մասին տվյալներն անբավարար են:

Conditional Risk of TdP (պայմանական ռիսկ) – այս դեղամիջոցները փոխկապակցված են TdP հետ **ԲԱՅՑ** միայն այն դեպքում երբ նրանք կիրառվում են որոշակի պայմաններում (օրինակ՝ ավելորդ մեծ դեղաչափեր; հիպոկալեմիա, համատեղ ընդունվող փոխազդող դեղորայք) **ԿԱՄ** ստեղծված են պայմաններ որոնք հեշտացնում կամ հրահրում են TdP (օրինակ՝ QT-երկարացնող դեղամիջոցի նյութափոխանակության ընկճում, էլեկտրոլիտների խանգարում որը հարուցում է TdP):

Drugs to Avoid in cLQTS (դեղամիջոցներ, որոնք բնածին long QT համախտանիշի դեպքում հակացուցված են) – այս դեղամիջոցները **բնածին long QT համախտանիշով պացիենտների շրջանում** TdP բարձր ռիսկ են պարունակում և ներառում են վերին երեք կատեգորիաներում նշված (հայտնի, հնարավոր և պայմանական ռիսկով) դեղամիջոցները **ԳՈՒՄԱՐԱԾ** հավելյալ դեղամիջոցներ որոնք որպես այդպիսին չեն երկարացնում QT ինտերվալը բայց ունեն հատուկ ռիսկ (SR)՝ իրենց այլ ազդեցությունների հետ կապված:

Ծանոթագրություններ.

- TdP (torsades de pointes, ֆրանս. [tɔʁsad də pwãt]) – իլիկաձև փորոքային հաճախասրտություն
- LQTS (long QT syndrome) – երկարած QT ինտերվալի համախտանիշ
- cLQTS (congenital long QT syndrome) – երկարած QT ինտերվալի բնածին համախտանիշ



COVID-19 վարակի բուժման մեջ կիրառվող դեղամիջոցների QT/TdP ռիսկերի մասին տե՛ս նաև մեր՝ բժիշկների համար նախատեսված նյութը https://www.sirt.online/crediblemeds-covid-qtc-tdp-guidance